

ՆՈՐ ՌՈՒՍԻՈՅ ԵՒ ՊԵՍԱՐԱՊԻՈՅ ԱՐԳԵԼԱՆՈՅՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ.

Ներքին գործոց ոստիկանարանին առաջարկութեամբը Օտեսայի մէջ ժողով մը հաստատուած է որ քննէ եւ սրբագրէ նոր Ռուսիոյ եւ Պեսարապիոյ ծովային ու ցամաքային արգելանոցներուն (քառանթիւներուն) այժմու կարգադրութիւնները: Կրտսի թէ այս քննութեանց մէկ հետեւանքն ալ այս պի-

տի լինի որ ծովային գլխաւոր արգելանոցները լինին Օտեսա եւ Թէոդոսիա, իսկ եւ պատրիա եւ Սեւասթոփոլ արգելանոց չմնայ. ցամաքային արգելանոցներն ալ պիտի լինին գլխաւորապէս Պեսարապիոյ Գուպէյ եւ Սքուլեան աւանները: Այս լուրը քիչ ժամանակէն աւելի որոշ կրնայ իմացուիլ:

Մ Ա Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Ք.

ՌՈՒՍԻՈՅ ԲՆԱԿԱՅՈՅ ՎԵՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Ռուսիոյ բնակչաց վիճակագրութիւնը այս կերպով կ'զտնեմք Գիէվի լրագրոյն մէջ.

1859 տարւոյն մէջ բոլոր ռուսադաւան ազգին համարանքն է եղեր 50 միլիոն, 725 հազար, 220 հոգի: Նոյն տարւոյն մէջ ծներ է 2 միլիոն 755 հազար 27 հոգի, եւ մեռեր է 1 միլիոն 127 հազար, 198. Ըսել է թէ մէկ տարուան մէջ աւելցեր է 1 միլիոն 627 հազար 829 հոգի:

Եկեղեցիներուն թիւն է եղեր 36,820, մատուռներունը 12,266. — որ ասել է գրեթէ 1034 հոգւոյ մէկ եկեղեցի կամ մատուռ: Նոյն տարին շինուեր է 390 նոր եկեղեցի եւ 75 մատուռ: Վանքերուն թիւն է եղեր 603. Վանականաց թիւը 6556, եւ արեղայիցը կամ նորընծայիցը 5624, մայրապետացը 2464, եւ նորընծայ կուսանացը 7342:

Բոլոր աշխարհական եկեղեցականաց թիւն է եղեր 124 հազար 984. եւ կրօնաւորացը 12,510: —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ.

Աշխարհիս բոլոր բնակչաց թիւը կ'համարուի հազար միլիոն:

Այսչափ բազմութիւնը 3061 լեզուով կ'սօսի իրարու հետ:

Սոցա դաւանանքն է 1100:

Սոցա կեանքը՝ միջին տարւով 33½:

Մինչեւ 7 տարեկանը՝ ¼ կ'մեռնին: Մինչեւ 17-ը՝ ½ կ'մեռնին:

Հարիւր մարդէն 6-ը կ'հասնի մինչեւ 60 եւ իվեր:

Հազարէն մէկը միայն 100 տարի կ'ապրի:

Հինգհարիւրէն մէկը միայն կ'հասնի 80-ի:

Տարին 33 միլիոն մարդ կ'մեռնի աշխարհիս մէջ:

Յորը 91 հազար » »

Ժամը 3730 » »

Վայրկեանը 60 հոգի » »

Երկվայրկեանին կամ րոպէին՝ 1 հոգի կ'մեռնի:

Ծնունդը աւելի է քան զմահի, եւ մահուան կորուստը կ'եցուի ծննդեամբը:

Կանայք էրիկմարդիկներէ աւելի կ'ապրին մինչեւ ի 30 տարին, իսկ անկէ վեր՝ էրիկմարդիկ աւելի կ'ապրին քան զկանայս:

Կարգուողաց եւ չկարգուողաց մէջի համեմատութիւնն է 100 առ 75:

Մարդիկ կ'ծնանին եւ կ'մեռնին աւելի գիշեր ժամանակ:

Էրիկմարդոց մէկ մասը միայն կ'արող է զէնք կրել. եւ 1000-էն մէկը միայն բնական յարմարութիւն ունի զինուոց:

Ո՛րչափ աւելի երկիր մը լուսաւորութիւնը տարածուել է՝ նոյնչափ աւելի այն ազգը ուժով կ'իինի եւ առողջ: Ոմանց այնպէս երեւցած էր թէ լուսաւորութիւնը զմարդիկ տկար ու սակաւկեաց կ'ընէ, բայց փորձը սուտ եւ ամենեւին հակառակը կ'ցուցանէ:

ՄԵՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՅ ՁՈՐԱՅ ԹԻՒՐ.

Ռուսիոյ ինքնակալութիւնը քանի որ մեծցաւ՝ հարկադրեցաւ իւր զօրքն ալ աւելցնելու, այնպէս որ այժմ 2 միլիոն ու կէս կ'համարուի բոլոր զօրաց թիւը: 1851-ին Ռուսաց կանոնաւոր ու անկանոն զօրացը թիւն էր 1,332,468 հոգի, եւ 267,872 ձի. 1856-ին զօրքն էր 2 միլիոն 536 հազար 183 հոգի, եւ 394 հազար 8 ձի: Խրիմու պատերազմէն յետոյ տէրութիւնը տեսաւ որ աւելի օգտակար է զօրաց թիւը պակսեցնել, եւ եղածներուն ապրուստն ու կարգաւորութիւնը լաւցնել. որով 1859-ին կանոնաւոր եւ անկանոն զօրաց թիւը համագումար եղեր է 1 միլիոն 234 հազար 569 հոգի, եւ 195 հազար 348 ձի: Սոցա զօրապետներն են 334, սպայք (օֆիցէր) 19,025, ստորին աստիճանաւորք կամ կանոնաւոր զօրք 698 հազար 354: Իսկ անկանոն զօրաց թիւը 338 հազար, 381 է, զօրապետացը 23, սպայիցը 2794:

Գաղղիան խաղաղութեան ժամանակ կ'ապհէ 431 հազար հոգի, Անգղիան 475 հազար, Աւստրիան 300 հազար, Բրուսիան 214 հազար:

Գաղղիոյ մէջ՝ մէկ, Աւստրիոյ մէջ՝ 120 հոգւոյ մէկ, Բրուսիոյ բնակիչներուն համարանքին նայելով՝ 85 հոգւոյ մէկ զինուոր կուգայ, Անգղիոյ մէջ՝ 64 հոգւոյ մէջ՝ 70 հոգւոյ մէկ. իսկ Ռուսիոյ, թէ որ բոլոր զօրքը համարեմք, 56 հոգւոյ մէկը զինուոր կ'ընէ, եւ թէ որ միայն կանոնաւոր զօրացը նայեմք, 82 հոգւոյ մէկը: